USAID FROM THE AMERICAN PEOPLE

დემოკრატიული მმართველობა
საქართველოში (G3) პროგრამა

international iccc center for civic culture

2014 թվականի հունիսի 15-ին անց են կացվում տեղական ինքնակառավարման ընտրություններ:

Դուք ընտրում եք սակրեբուլոյի անդամների և առաջին անգամ ընտրում եք վարչության նախագահի/ քաղաքապետի

Կատարեք ընտրություն:



Տեղական ինքնակառավարումը ձեզ ամենամոտ գտնվող իշխանությունն է և այն հաշվետու է միայն ձեր առջև:

Դուք և ձեր կողմից ընտրված մարդիկ, հաջորդ 4 տարվա ընթացքում, միասին պետք է բարելավեք գոյություն ունեցող միջավայրը կենտրոնական իշխանությունից ավելի լավ, ամենաճիշտ տեղական իշխանությունը գիտի ձեր գյուղի և քաղաքի հիմնախնդիրները և կարիքները:

Տեղական հիմնախնդիրները կարգավորելու նպատակով, տեղական իշխանությունը պետք է պլանավորի տեղական բյուջեն և ձեր կարիքներին համապատասխան ծախսի այն: Սակրեբուլոները և վարչության նախագահները/քաղաքապետերը պետք է ապահովեն.

- Տարածքի և ճանապարհների բարեկարգումը,
- Փողոցների, զբոսայգիների, պուրակների և այլ հասարակական վայրերի մաքրումը, կենցաղային մնացորդների հավաքումը և դուրսբերումը,
- Տարածքի կանաչապատումը, փողոցների լուսավորումը,
- Ջրամատակարարումը, ոռոգման համակարգի զարգացումը,
- Մանկապարտեզների գործունեությունը,
- Բնակչության տրանսպորտով սպասարկումը,
- Դրսի առևտրի, շուկաների և տոնավաճառների կարգավորումը,
- Շինարարության թույլտվություն տալը,
- Ընտանի կենդանիներ պահելու կանոնների սահմանումը,
- Սահմանափակ ունակություններ ունեցող անձանց, երեխաների և ծերերի համար համապատասխան ենթակառույցի զարգացումը,
- Անօթևաններին ապաստարանով բավարարումը,
- Գերեզմանոցների սարքավորումը և խնամքը,

Ինքնակառավարումը նաև կարող է իրականացնել մի շարք միջոցառումներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են. զբաղվածության օժանդակում, գյուղատնտեսության և գյուղատնտեսական համայնատիրությունների աջակցություն, զբոսաշրջության և սպորտի զարգացում, սոցիալական օգնության ծրագրերի ստեղծում, տեղական մակարդակով երիտասարդական քաղաքականության ձևավորում և այլն:

Ինքնակառավարման նոր օրենքը՝ «Տեղական ինքնակառավարման օրենսգիրքը», նախատեսում է ամբողջ շարք նորույթներ.

- Ինքնակառավարվող քաղաքների քանակը աճեց 5-ից մինչև 12 (ինքնակառավարվող քաղաքներ դարձան. Ախալցիխե, Ամբրոլաուրի, Գորի, Զուգդիդի, Թելավի, Մցխեթա, Օզուրգեթի), որով միմյանցից սահմանազատվեցին քաղաքային և գյուղական գոտիները,
- Տարածաշրջաններում պետության լիազորների/նահանգապետերի մոտ ստեղծվում են խորհրդատվական խորհուրդներ, որտեղ կմտնեն Սակրեբուլոյի նախագահները, նրանց տեղակալները և քաղաքապետերը/վարչության նախագահները: Խորհուրդները, լիազորների/նահանգապետերի հետ միասին, կքննարկեն և կպլանավորեն տարածաշրջաններում իրականացվելիք սոցիալական և տնտեսական բնույթի ծրագրերը,
- Պետության լիազորի/նահանգապետի փոխարեն, մունիցիպալիտետների վրա իրավական վերահսկողություն կիրականացնի վարչապետը:

Նշված նորույթները բարեփոխման միայն սկիզբն է: Մոտ ժամանակներում պլանավորվում են լրացուցիչ միջոցառումներ ինքնակառավարման համակարգի ամրապնդման նպատակով.

- Նոր մունիցիպալիտետների ստեղծման գործընթացը պետք է շարունակվի մինչև 2017 թվականը և ընդհանուր սոցիալական, տնտեսական կամ աշխարհագրական բնութագրիչներ ունեցող տարածքների վրա ստեղծվեն եղածից համեմատաբար փոքր չափսի ինքնակառավարումներ,
- Հասարակական խմբերը (գյուղերում, համայնքներում, քաղաքներում) իրավունք ստացան, Վրաստանի կառավարության առջև, պատշաճ հիմնավորմամբ, առաջադրեն նոր ինքնակառավարումներ ստեղծելու հարցը,

- 2014 թվականի ընթացքում Վրաստանի խորհրդարանը պետք է ընդունի օրենք հասարակական մասնակցության հավելյալ ձևերի մասին, որի համաձայն էլ բնակավայրերում պետք է ստեղծվեն հասարակական խորհուրդներ, որտեղ բնակավայրի բնակիչները կքննարկեն գոյություն ունեցող տեղական հարցերը,
- Մինչև 2014 թվականի սեպտեմբերի 1-ը, Վրաստանի կառավարությունը խորհրդարանին պետք է ներկայացնի հարկագանձումների սահմանազատման մասին օրինագիծ, որի համաձայն էլ կաճեն ինքնակառավարումների սեփական եկամուտները,
- Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, Վրաստանի կառավարությունը պետք է պատրաստի և Վրաստանի խորհրդարանին ներկայացնի օրինագիծ տեղական նշանակության բնական ռեսուրսների, այդ թվում ջրի և հողի ռեսուրսների սահմանազատման մասին,
- Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը Վրաստանի կառավարությունը պետք է իրականացնի իր ձեռքին եղած ունեցվածքի ցուցակագրումը և սկսի ունեցվածքի մասի ինքնակառավարումներին փոխանցումը,
- 2014 թվականի ընթացքում Վրաստանի կառավարությունը պետք է ներկայացնի աստիճանավորների անընդմեջ ուսման համակարգի ռազմավարությունը:

Բարեփոխման հաջողության համար Վրաստանի քաղաքացիների համամասնակցությունը որոշիչ է:

Մեր ակտիվությունից մեծ չափով կախված է ինքնակառավարման և համապատասխանաբար, մեր երկրի հետագա զարգացումը:

Վրաստանի օրենսդրությունում («Տեղական ինքնակառավարման օրենսգիրք», «Ընտրական օրենսգիրք») կան մի շարք նորույթներ, որոնք ավելացնում են քաղաքացիների իրավունքները.

- Տեղական իշխանության գործադիր ճյուղի ղեկավարը (քաղաքներում՝ քաղաքապետերը, այլ միավորներում՝ վարչության նախագահները) կընտրվի ուղիղ, անմիջականորեն բնակչության կողմից: Ընտրական պատնեշը կազմում է ընտրողների 50%-ը,
- Քաղաքական կուսակցությունների ամրապնդման նպատակով ընտրական պատնեշը կրճատվեց մինչև 4%, սա հաղթելու և սակրեբուլոներ ընկնելու ավելի շանս է տալիս փոքր, ընդդիմադիր կուսակցություններին,
- Սակրեբուլոների անդամների թեկնածուներ առաջադրելու իրավունք այսուհետև ունեն ոչ միայն կուսակցությունները, այլև քաղաքացիների նախաձեռնողական խմբերը: Արդյունքում քաղաքացիները կարող են առաջադրել այնպիսի անձանց թեկնածությունները, որոնք չեն պատկանում ոչ մի կուսակցության, սակայն օգտվում են հասարակության վստահությունից:
- Եթե ընտրված քաղաքապետը/վարչության նախագահը չի արդարացրել հասարակության հույսերը, ընտրողների 20%-ի կամ սակրեբուլոյի անդամների 50%-ի պահանջով, սակրեբուլոյի 2/3-ը կարող է պաշտոնանկ անել նրան:

Բացի նշվածից, այնպես, ինչպես նախկինում, ինքնակառավարման մեջ գրանցված քաղաքացիների 1%-ը, ցանկության դեպքում, կրկին իրավունք ունի, Պետիցիայով դիմել ինքնակառավարումներին, առանձին հարցեր կարգավորելու նպատակով: Քաղաքացիները նաև իրավունք ունեն, ստանալ լրիվ տեղեկատվություն ինքնակառավարման գործունեության մասին, ներկա գտնվել սակրեբուլոյի նիստերին, հանդիպել ինքնակառավարումների ներկայացուցիչներին և արտահայտել իրենց կարծիքները և առաջարկությունները: Մունիցիպալիտետի վարչության նախագահը/քաղաքապետը և սակրեբուլոյի անդամը պարտավոր են տարեկան գոնե մեկ անգամ քաղաքացիներին ներկայացնեն զեկույց կատարած աշխատանքի մասին:

Ինքնակառավարումը իրատեսության վերածելու համար, հարկավոր է, որ մեզանից ամեն մեկը ակտիվորեն ընդգրկվի ընտրական գործընթացին և անձամբ որոշի սեփական քաղաքի, գյուղի ապագան:

Կատարեք ընտրություն

Ընրություններին մասնակցության համար ընտրական տեղամաս պետք է գնաք 2014 թվականի հունիսի 15-ին, ժամը 08:00-ից մինչև 20:00 :

Մոտներդ անպայման ունեցեք Անձնական վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր:

Ինչպես պետք է վարվեք ընտրական տեղամասում.

Քայլ 1. Ընտրական տեղամաս մտնելիս՝ հանձնաժողովի անդամին պետք է ներկայացնեք Անձնական վկայականը կամ անձնագիրը:

Քայլ 2. Այնուհետև դուք կանցնեք դրոշմանշման ստուգման ընթացակարգ: Հանձնաժողովի անդամը ուլտրամանուշակագույն լապտերով կստուգի, նկատվու՞մ է, թե ոչ դրոշմանշում:

Քայլ 3. Հանձնաժողովի անդամը մատնացույց կանի, թե գրանցման որ սեղանին մոտենաք: Դուք կմոտենաք գրանցման սեղանին և գրանցողին կներկայացնեք ձեր Անձնական վկայականը/անձնագիրը:

Քայլ 4. Գրանցողը կստուգի ցուցակում ձեր գտնվելու փաստը և հաստատման դեպքում ձեզ կկատարի դրոշմանշում:Եթե հրաժարվեք դրոշմանշման ընթացակարգից, դուք քվեարկությանը մասնակցելու իրավունք չեք ունենա:



Քայլ 5. Յուցակում ստորագրությամբ կհաստատեք քվեաթերթիկներ ստանալը: Գրանցողը քվեաթերթիկներ պետք է փոխանցի միայն այն բանից հետո, երբ բվեաթերթիկի ետևի էջին կստորագրի և կհաստատի համապատասխան կնիքով:

Յուցակում ստորագրությամբ կհաստատեք քվեաթերթիկներ ստանալը: Գրանցողը քվեաթերթիկներ պետք է փոխանցի միայն այն բանից հետո, երբ քվեաթերթիկի ետևի էջին կստորագրի և կհաստատի համապատասխան կնիքով:

Քայլ 6. Գաղտնի քվեախցիկ մտնում եք մենակ (քվեաթերթիկները լրացնելիս արգելված է այլ անձանց ներկայությունը) և լրացնում եք քվեաթերթիկները: Պետք է շրջագծեք ձեզ ցանկալի սակրեբուլոյի անդամի և գամգեբելիի թեկնածուների և կուսակցության հերթական համարները:

Դիտողություն. *Եթե դուք չեք կարող անկախ լրացնել ընտրական քվեաթերթիկը, իրավունք ունեք օգնության համար գաղտնի քվեարկության խցիկ հրավիրեք ցանկացած անձի, բացի ընտրական հանձնաժողովի անդամից, թեկնածուից, ընտրական սուբյեկտի ներկայացուցչից և դիտորդից:*

Քայլ 7. Ձեր քվեաթերթիկները այնպես պետք է ծալեք, որպեսզի չերևա, թե ում ձայն տվեցիք: Դուրս եք գալիս գաղտնի քվեարկության խցիկից և ծալած քվեաթերթիկներով մոտենում եք ընտրական տուփի մոտ առանձին դրված սեղանին, վերցնում եք հատուկ ծրար և դրանում տեղադրում եք քվեաթերթիկները: Ընտրական հանձնաժողովի անդամը իրավունք չունի բացել լրացված ընտրական քվեաթերթիկը կամ այլ կերպ խախտել քվեարկության գաղտնիությունը:



Դիտողություն. *Եթե դուք փչացրեցիք ընտրական քվեաթերթիկը կամ հատուկ ծրարը, այդ մասին պետք է տեղեկացնեք հանձնաժողովի նախագահին, որի հանձնարարությամբ, գրանցողը պարտավոր է փոխարինել փչացված քվեաթերթիկը նորով:*

Քայլ 8. Մոտենում եք ընտրատուփին: Այն բանից հետո, երբ հանձնաժողովի անդամը կհամոզվի, որ միայն մեկ ծրար ունեք ձեր ձեռքին, կբացի ընտրատուփի կտրվածքը և դուք կգցեք ծրարը ընտրատուփի մեջ:



Քայլ 9. Ծրարը ընտրատուփի մեջ գցելուց հետո, դուք անմիջապես թողնում եք ընտրական տեղամասը:

Հիշեք՝

Եթե առողջական վիճակի պատճառով չեք կարողանում գնալ ընտրական տեղամաս, դուք կարող եք ընտրություններին մասնակցել փոխադրական տուփի միջոցով, ինչի մասին ընտրատեղամասի հանձնաժողովին պետք է դիմեք գրավոր կամ հեռախոսով մինչև քվեարկության օրը գոնե 2 օրով շուտ (մինչև հունիսի 13-ը): Նման դեպքում հնարավորություն կունենաք ձայն տալ ձեր տանը:

Հասցե՝ Թբիլիսի, Բաքվի փ. 20 ա,
հեռ.՝ +995 32 2 94 02 96
office@iccc.org.ge
www.archevnebi.ge
www.facebook.com/ivote.ge